նրանք: Ծխի ներկայութիւնը միայն, որ երբեմն դուրս է հոսում նրանց շրթունքների միջից, ցոյց է տալիս, որ այդ թմրած, անշարժ էակները արթուն են: Դրանք վաղ-առաւօտեան, իրանց տներից դուրս եկածին պէս, իսկոյն դիմում են սրճատունը. այստեղ լոցւում, այստեղ սանդրւում, այստեղ կատարում են իրանց առաւօտեան աղօթքը եւ այստեղ դուրս են բերում իրանց նախորդ օրոայ «խումարութիւնիցէ: Սրճատան սպասաւորները ծանօթ են նրանց իւրաքանչիւրի սովորութիւններին, եւ մեծ պատրաստակամութեամբ կատարում են նրանց բոլոր քմահաճութիւնները: Ամբողջ օրը, իրանց տեղում անշարժ նստած, այդ ողորմելի մարդիկը գրգռում են իրանց ուղեղը դառն ղահոէով, թամբաքոի ծուխով եւ ափիոնի փոքրիկ դեղահատներով: Այդ մարդիկը ապուշի դէմք ունեն, ապակու նման սառն եւ անշարժ աչքեր եւ դողդոջուն ձեռքեր:

Հէնց նոյն ապուշների մօտ Աւետարանի լոյսը ծաւալող միսիոնարի գործակալը բաց է արել Աստուածաշունչը եւ զբաղուած է կրօնական վիճաբանութիւններով: Մի քանի հարցասէրներ շրջապատել են նրան, լսում են, վիճում են եւ հայհոյում են:

Իսկ իմ ուշադրութիւնը գրաւեցին երեք հոգի, որ հեռու նստած էին մի բոլորակ սեղանի շուրջը, որի վրայ դրած էր մի շիշ օղի: Նրանցից մէկը միջահասակ երիտասարդ էր եւ իր հագուստի ձեւերով աւելի նման էր Մուսուլի կամ Բաղդադի կողմերի հայերին: Նա փաթաթուած էր սեւ եւ սպիտակ զոլերով երկար աբայի (վերարկոի) մէջ, որի նմանը կրում են հիջազի ուխտաւորները: Գլխի արաբական ապարօշը իր ծոպաւոր վերջաւորութիւններով ծածկում էր նրա ուսերը, իսկ ճակատը, յօնքերը եւ մինչեւ անգամ աչքերը հազիւ էին երեւում մետաքսեայ գոյնզգոյն փաթոթի տակից, որը կապել էր իր գլխին: Ես իսկոյն մտածեցի, թէ դա այն մուսուլցի վաճառականը պէտք է լինէր, որի հետ տեսնուելու համար եկած էր Ասլանը: Իսկ մուսուլցու երկու խօսակիցները ինձ աւելի օտարոտի մարդիկ էին երեւում. այդ ցոյց էր տալիս նրանց հնամաշ կիսաեւրոպական եւ կիսաասիական հագուստը, որ սաստիկ աչքի էր զարկում: Շատ հաւանական էր, որ այդ մարդիկ երկար թափառել էին այն երկրներում, որտեղ նեղ վարտիք, լայնեզրեայ գլխարկ եւ սերթուկ են հագնում, իսկ յետոյ, վերադառնալով Ասիա, եւրոպական հագուստի միայն կտորտանքներ էր մնացել նրանց վրայ:

— Ո՞վ է այն երիտասարդը, — հարցրի ես Թէոս ախպօրից, ցոյց տալով մուսուլցուն:

— Նա խօջայ Թորոսն է, մուսուլցի է, այստեղ թումաջի վաճառականութիւն է անում, — հանգամանօրէն պատասխանեց Թէոս ախպերը: